ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
թիվ 4

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար գրադարանային գրքեր ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 20 նոյեմբերի 2019թ.

Սույն թվականի նոյեմբերի 20-ին ժամը 14.30-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար գրադարանային գրքեր ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/17» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ-ին կողմից առաջարկվող ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի գնահատման գնահատող հանձնաժողովի նիստ

Նիստին մասնակցում էին՝

Գնման պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Ն. Ա. Կուտուզյան
Գնման պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Լ. Գ. Սիրունյան
Գնման պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Խ. Ժ. Սաֆարյան
Գնման պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Տ. Հ. Ձաքոյան
Գնման պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Ս. Պ. Կարապետյան
Գնման պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Ս. Բ. Ղարաբաղցյան

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց ՀՀ ՊԵԿ-ի կողմից հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով մասնակիցների ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկատվության և համապատասխան չափաբաժիններով առաջին տեղ գրված՝ հաղթող մասնակցի կողմից ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի ներկայացման մասին:
Հանձնաժողովը գնահատեց, որ ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին, կազմվել և ներկայացվել է սահմանված կարգով: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 34-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

- ✓ 17; 19; 20; 21; 22; 24; 27; 32; 38; 39; 41; 42; 43; 44; 48; 49; 51; 52; 69; 70; 71 և 72 չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ-ին,
- ✓ Առաջարկել «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ-ին հաստատել պայմանագրի նախագիծը և ներկայացնել պայմանագրի ապահովում:
- ✓ Սույն արձանագրությունը և պայմանագիր կնքելու մասին որոշումը սահմանված կարգով հրապարակել պաշտոնական տեղեկագրում:
- ✓ Անգործության ժամկետ չի սահմանվում:
- ✓ Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել ընտրված մասնակցի կողմից համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետներում ներկայացնելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ժամը 14.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում:
- ✓ Որոշումն ընդունվել է կողմ՝ 5 և դեմ՝ 0:

հանձնաժողովի նախագահ	Ն. Ա. Կուտուզյան
հանձնաժողովի անդամ՝	Լ. Գ. Սիրունյան
հանձնաժողովի անդամ՝	Խ. Ժ. Սաֆարյան
հանձնաժողովի անդամ՝	Տ. Հ. Զաքոյան
հանձնաժողովի անդամ՝	Ս. Պ. Կարապետյան
հանձնաժողովի քարտուղար՝	Ս. Բ. Ղարաբաղցյան